Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-959[2]-06.04.2011-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀՈԴՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (1 հուլիսի, 1998 թվական, ՀՕ-248) 35-րդ հոդվածը լրամշակել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.

§Սույն հոդվածի առաջին մասի 13-րդ կետում նշված հիմքով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել հանցագործությամբ պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ: Այս դեպքում ևս գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. 183-րդ հոդվածի 1-ին մասի «177-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով» բառերը փոխարինել «177-րդ հոդվածի 1-ին մասով» բառերով:

ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ռաֆիկ Պետրոսյան	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 1. «ՀՈԴՎԱԾ 53. ԳՈՒՅՔԻ ՄԱՆՐ ՀԱՓՇՏԱԿՈՒՄԸ 1. Գույքի մանր չափերով հափշտակությունը՝ գողության, յուրացման, վատնման, պաշտոնեական դիրքի չարաշահման կամ խարդախության միջոցով՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով: 2. Սույն հոդվածով նախատեսված մանր չափերով հափշտակություն է՝ - գողության միջոցով իրավախախտումը կատարելու պահին Հայաստանի Հանրապետության սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը չգերազանցող գումարը (արժեքը). -յուրացման, վատնման, պաշտոնեական դիրքի	Ընդունվել է	Այդ կապակցությամբ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:

	չարաշահման կամ խարդախության եղանակով իրավախախտումը կատարելու պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկը չգերազանցող գումարը (արժեքը)»:		